

## ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույն գաղտնիության պահպանման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան գրանցված և կազմակերպված ընկերության, ի դեմս \_\_\_\_\_ ի, և \_\_\_\_\_, ի դեմս \_\_\_\_\_ ի, այսուհետ առանձին անվանվելով նաև՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր, հետևյալի մասին.

### 1. Հասկացությունները

- 1.1. *Բացահայտող* նշանակում է \_\_\_\_\_, վերջինիս բաժնետերերը, գործընկերները, խորհրդատուները, աշխատակիցները և փոխկապակցված անձինք:
- 1.2. *Ընկերություն* նշանակում է \_\_\_\_\_, վերջինիս գործընկերները, խորհրդատուները, աշխատակիցները և փոխկապակցված անձինք:
- 1.3. *Պայմանագիր* նշանակում է Աշխատանքների կատարման, Ծառայությունների վճարովի մատուցման կամ այլ ցանկացած պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որը կնքվել է Կողմերի միջև մինչև Համաձայնագրի կնքումը կամ կամ կնքվելու է Համաձայնագրի կնքումից հետո, որը պետք է պահպանի Համաձայնագրի բոլոր պահանջները, եթե այլ բան սահմանված չէ տվյալ պայմանագրով:
- 1.4. *Գաղտնի տեղեկատվություն կամ Տեղեկություններ* նշանակում է ցանկացած տեղեկություն, ներառյալ, բայց առանց սահմանափակման, գրավոր և բանավոր տեղեկություն, փաստաթղթեր և այլն, ինչպես որ սահմանված է Համաձայնագրի 2.2 ենթակետով:
- 1.5. *Թույլատրելի նպատակներ* նշանակում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված և Կողմերի կողմից փոխադարձաբար համաձայնեցված և ընդունելի նպատակներ, որոնց համար գաղտնի տեղեկատվության բացահայտումն երրորդ անձին թույլատրելի է Համաձայնագրի կամ Պայմանագրի պահանջների ներքո:
- 1.6. *Երրորդ անձ կամ կողմ* նշանակում է ցանկացած այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձ, որը չի հանդիսանում Համաձայնագրի կողմ:
- 1.7. ՀՀ նշանակում է Հայաստանի Հանրապետություն:

### 2. Համաձայնագրի առարկան

- 2.1. Համաձայնագիրը կարգավորում է Կողմերի միջև գաղտնի տեղեկությունների տրամադրման, փոխանցման, պահպանման և բացահայտման հարցերը:
- 2.2. Համաձայնագրի իմաստով գաղտնի տեղեկություններ են համարվում Համաձայնագրի և Պայմանագրի գործողության ընթացքում և դրա իրականացման հետ կապված Բացահայտողի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրված տեղեկությունները՝ ներառյալ և առանց սահմանափակման Ընկերությանը տրամադրված ցանկացած գրավոր կամ բանավոր տեղեկությունները, որոնք հանդիսանում են Բացահայտողի և/կամ վերջինիս հետ փոխկապակցված կամ գործարարական հարաբերություններում գտնվող անձի առևտրային, ծառայողական և/կամ բանկային գաղտնիքը: Մասնավորապես, գաղտնի են համարվում Բացահայտողի կողմից Ընկերությանը տրամադրված և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում և դրա իրականացման հետ կապված Ընկերությանը հայտնի դարձած հետևյալ տեղեկությունները.



- 2.2.1. Բացահայտողի առևտրային գաղտնիքները կամ նոու-հաու (know-how) նյութերը, ներառյալ հետազոտությունները, արտադրանքները, արտադրանքի նմուշները, ծառայությունները, պատվիրատուները և գործընկերները.
- 2.2.2. Բացահայտողի գործարար (բիզնես) տեղեկությունները, ներառյալ գործարար և/կամ ռազմավարական զարգացման ծրագրերը, ներդրումային նախագծերը, համագործակցության պայմանագրերը, գյուտերը, տեխնոլոգիան, մարքեթինգային տեղեկությունները և շուկայավարման պլանները, նորարությունները.
- 2.2.3. Ընկերության կողմից որևէ գործընթացների/ իրավիճակների մասնակցելու, ակնատես լինելու հետևանքով և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում և դրա իրականացման հետ կապված հայտնի/հասանելի դարձած բոլոր տեսակի առդիտ, ֆոտո և վիդեո նյութերը: Բացահայտողի ներքին իրավական ակտերը և այլ նյութեր, որոնք կարող են հասանելի դառնալ Ընկերությանը՝ Բացահայտողի հետ համագործակցության ողջ ընթացքում.
- 2.2.4. Բացահայտողի տեխնիկական տեղեկությունները, ներառյալ մեթոդաբանությունը, բանաձևերը, ընթացակարգերը, կառույցները, համակարգերը, տեխնիկական լուծումները, մեքենաները, համակարգչային ծրագրերը և նախագծերը.
- 2.2.5. Բացահայտողի հաճախորդների և/կամ պատվիրատուների վերաբերյալ ցանկացած տեսակի տեղեկությունները, այդ թվում նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ներառյալ հաճախորդների ցանկերը, գների վերաբերյալ տեղեկությունները, մատակարարման աղբյուրները, ֆինանսական տեղեկությունները, շուկայական ցանցը և պլանները:

2.3. Որևէ տեղեկություն չի կարող համարվել գաղտնի, եթե այն բացահայտվել տրամադրվել կամ հայտնի է դարձել երրորդ անձանց օրինական ճանապարհով՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:

**3. Գաղտնի տեղեկությունների տրամադրումն ու պահպանումը: Ընկերության երաշխիքներն ու սպահովագրումները**

- 3.1. Բացահայտողից տեղեկություններ ստանալիս Ընկերությունը պարտավոր է դրանց վերաբերվել որպես գաղտնի տեղեկատվության, եթե Բացահայտողը հստակ գրավոր կերպով Ընկերությանը չի զգուշացրել դրանց ոչ գաղտնի բնույթի վերաբերյալ:
- 3.2. Ընկերությունը պարտավոր է Բացահայտողից Համաձայնագրի 3.1 կետի համաձայն տեղեկություն ստանալուց հետո ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները գաղտնի համարվող տեղեկությունների պատշաճ պահպանման համար:
- 3.3. Ընկերությունն իրավունք չունի երրորդ անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրել Բացահայտողից ստացված որևէ գաղտնի տեղեկություն և պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները նման տեղեկությունների պատշաճ պահպանման համար:
- 3.4. Ընկերությունն իրավունք ունի օգտագործել Բացահայտողից տրամադրված գաղտնի տեղեկությունները՝ Պայմանագրով սահմանված աշխատանքները կատարելու և/կամ գործունեությունն իրականացնելու համար: Մասնավորապես, տրամադրված և/կամ բացահայտված գաղտնի տեղեկությունները Ընկերությունը կարող է օգտագործել հետևյալ նպատակներով<sup>1</sup>.
  - 3.4.1. Բացահայտողի ֆինանսատնտեսական գործունեության, կարգավիճակի և արդյունքների, դրամական հոսքերի նախնական ուսումնասիրություն.
  - 3.4.2. Բացահայտողի իրավաբանական կարգավիճակի, պետական բյուջեի հետ հարաբերությունների նախնական ուսումնասիրություն.

<sup>1</sup> Պայմանագրում նշել միայն տարբերակներից կիրառելիները, իսկ եթե նշված տարբերակներից որևէ մեկը կիրառելի չէ, ապա նշել օգտագործման թույլատրելի նպատակը՝ ազատ տեքստով:



- 3.4.3. Բացահայտողի իրացման շուկաների, արտադրական հզորությունների, սարքավորումների և շինությունների նախնական ուսումնասիրություն.
- 3.4.4. Բացահայտողի մարդկային ռեսուրսների և կապիտալի նախնական ուսումնասիրություն.
- 3.5. Ընկերությունն պարտավորվում է ապահովել, ինչպես նաև հավաստիացնում և երաշխավորում է հետևյալը.
  - 3.5.1. գաղտնի տեղեկատվության պատշաճ պահպանումը և դրա չբացահայտումը կամ առանց Բացահայտողի գրավոր համաձայնության, դրա բացահայտման անթույլատրելիությունը երրորդ անձանց, եթե այլ բան սահմանված չէ Համաձայնագրով և/կամ Պայմանագրով.
  - 3.5.2. գաղտնի տեղեկատվության օգտագործումը և երրորդ անձանց տրամադրումը բացառապես թույլատրելի նպատակներով.
  - 3.5.3. ցանկացած երրորդ անձ, որին Համաձայնագրի պահանջների պահպանմամբ բացահայտվել/բացահայտվելու է գաղտնի տեղեկատվությունը Ընկերության կողմից, նախօրոք ամբողջությամբ տեղեկացնելը Ընկերության պարտավորության վերաբերյալ Համաձայնագրի ներքո և Բացահայտողի տեղեկացվածությունը այդ անձանց և նրանց տրամադրված/տրամադրվող գաղտնի տեղեկությունների շրջանակի մասին, ինչպես նաև Բացահայտողի պահանջով վերոնշյալ երրորդ անձանց կողմից վերոհիշյալ գաղտնի տեղեկատվության պահպանման վերաբերյալ պարտավորագրի կնքումը Համաձայնագրի պահանջների ներքո.
  - 3.5.4. Բացահայտողից գրավոր պահանջ ստանալուց հետո վերադարձնել գաղտնի տեղեկատվությունը և դրա պատճենները, եթե առկա են, կամ օրենքով և այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված կարգով հաստատել, որ գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը ոչնչացվել են.
  - 3.5.5. անհապաղ տեղեկացնել Բացահայտողին գրավոր կերպով ցանկացած դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, երբ Ընկերությունից պահանջվում է բացահայտել գաղտնի տեղեկատվության ցանկացած մաս, որպեսզի Բացահայտողը հնարավորություն ունենա իր հայեցողությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել իր գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու համար.
  - 3.5.6. Բացահայտողի ուսումնասիրության ու աուդիտի ընթացքում, ինչպես նաև նման ուսումնասիրության ու աուդիտի ավարտից հետո երկու տարիների ընթացքում առանց Բացահայտող կողմի գրավոր համաձայնության զերծ մնալ Բացահայտողի աշխատակիցներին և ղեկավարությանը ուղղակի կամ անուղղակի կերպով աշխատանքային առաջարկ անելուց (կիրառելի է, եթե կնքվել է կամ կնքվելու է Բացահայտողի ուսումնասիրության ու աուդիտի վերաբերյալ Պայմանագիր).
- 3.6. Ընկերությունն ընդունում և համաձայնում է զերծ մնալ Համաձայնագիրը կամ դրանում որևէ մաս փոխանցելուց կամ պատվիրակելուց առանց Բացահայտողի գրավոր համաձայնության: Ընկերությունը կարող է ներգրավել երրորդ անձի կամ անձանց միայն Բացահայտողի նախնական գրավոր համաձայնությամբ և ապահովելով, որ նշված երրորդ անձը կամ անձինք համաձայնում են պահպանել Համաձայնագրի և/կամ Պայմանագրի պահանջները՝ դառնալով Համաձայնագրի լիիրավ Կողմ:
- 3.7. Բացահայտողից Ընկերությանը տրամադրված գաղտնի տեղեկատվությունը չի սահմանում կամ ենթադրում Ընկերության համար ցանկացած տեսակի ներկայացուցչություն, երաշխավորություն, ապահովում, պարտավորություն կամ խրախուսում՝ տրամադրված Բացահայտողից:
- 3.8. Համաձայնագիրը կամ գաղտնի տեղեկատվության տրամադրումը կամ ստացումը չի սահմանում կամ ենթադրում ցանկացած թույլտվության (լիցենզիայի) տրամադրում Բացահայտողի կողմից



Ընկերությանը ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, հեղինակային իրավունքի կամ այլ մտավոր սեփականության գծով:

**4. Պատասխանատվությունը**

- 4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Համաձայնագրով սահմանված պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 4.2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում գաղտնի տեղեկությունների երրորդ անձանց բացահայտման կամ հրապարակման արդյունքում Բացահայտողին պատճառված վնասի համար, եթե գաղտնի տեղեկությունների տրամադրումը, բացահայտումը կամ հրապարակումը պահանջվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**5. Եզրափակիչ դրույթներ**

- 5.1. Համաձայնագրից բխող կամ դրա կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.2. Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 4 էջից, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
- 5.3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև ----- թ.՝ բոլոր դեպքերում պահպանելով գործողությունը Կողմերի միջև կնքված Պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Համաձայնագրով ստանձնած գաղտնիության պահպանման պարտավորությունը գործում է անժամկետ՝ անկախ Համաձայնագրի գործողության ժամկետից և/կամ Պայմանագրի կնքման կամ չկնքման, ինչպես նաև որևէ հիմքով դրա գործողության դադարման հանգամանքից:
- 5.4. Համաձայնագրում ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է կատարվի գրավոր կերպով՝ Կողմերի ստորագրությամբ:
- 5.5. Համաձայնագրում չկարգավորված հարցերն ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ի կատարումն վերոհիշյալի, Կողմերը ստորագրում են Համաձայնագիրը \_\_\_\_\_ի, 20\_\_\_\_ թվական, քաղաք Երևանում, Հայաստանի Հանրապետություն:

Բացահայտող	Ընկերություն